



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ  
Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, 31 Օգոստոսին, Թեմիս բարեխնամ Առաջանորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ Ս. Պատարագին, եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող հոգեւոր իր պատգամը:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY  
AT ST. SARKIS CHURCH**

On Sunday, August 31st, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at St. Sarkis Church in Pasadena. The Prelate will also deliver the sermon.

**ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՎԵՐԱՄՈՒՏԻՆ ԱՌԻԹՈՎ  
ՈՒՄՈՒՅՉԱՅ ՀԱՍԱԳՈՒՄԱՐ**

Կիրակի, Սեպտեմբեր 14-ին, մեր եկեղեցիներու Կիրակնօրեայ վարժարանները պաշտօնապէս պիտի բանան իրենց դռները:

Առ ի պատրաստութիւն նոր տարեշրջանին, Շաբաթ, Սեպտեմբեր 6-ին, լսարան-հաւաք մը կազմակերպուած է Կիրակնօրեայ վարժարաններու տեսուչներուն եւ ուսուցիչներուն համար:

Առաջնորդ Սրբազան Հօր նախագահութեամբ, Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմինի նախաձեռնութեամբ, եւ առաջնորդութեամբ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեանի, ուսուցչական լսարան-հաւաքը տեղի պիտի ունենայ Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ, կ.ե. ժամը 3-էն 6:00:

Նախատեսուած են վերամուտի կազմակերպչական աշխատանքներ եւ դասախօսութիւններ. պիտի ներկայացուին Խաչվերացի եւ Թարգմանչաց տօներուն առընչուող լսարանային ու դաստիարակչական նիւթեր:

Նոյն օրը՝ Շաբաթ, Սեպտեմբեր 6-ի երեկոյեան ժամը 6:00-ին, Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, ամսական ժամերգութիւն պիտի կատարուի Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշիսէն» մատուռին մէջ:

## **SUNDAY SCHOOL TEACHERS' SEMINAR AT THE PRELACY**

In preparation for the 2008-2009 school year, a seminar has been organized for Sunday School directors and teachers to take place on Saturday, September 6<sup>th</sup>, at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall. The seminar, which will take place from 3:00 p.m. to 6:00 p.m., has been organized by the Sunday Schools' Directorate and will be led by Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Muron Aznikian.

At 6:00 p.m. of the same evening, monthly service will take place at the "St. Dertad and St. Ashkhen" Chapel.

### **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՕՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ**

Հայ Օգնութեան Միութեան Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Նորընտիր Վարչութեան կազմը Հինգշաբթի, 28 Օգոստոսի առաւօտուն այցելեց Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ:

Պատուիրակութիւնը կը գլխաւորեր վարչութեան ատենապետուհի Տիկ. Վիքի Մարաշլեան, որ Առաջնորդ Սրբազանին ներկայացուց վարչութեան անդամներն ու անմիջական ծրագիրները: Պատուիրակութեան կ'ընկերանային ՀՕՄԻ Ընկերային Ծառայութեան բաժանմունքի պատասխանատուները:



Առաջնորդ Սրբազանը, իր կարգին, ներկաներուն ծանօթացուց Ազգ. Առաջնորդարանի յարկին ու անոր հովանիին տակ տարուող աշխատանքի կալուածները: Ան ողջունեց ՀՕՄԻ Շրջ. Վարչութեան այս նախաձեռնութիւնը եւ գնահատանքով արտայայտուեցաւ հայկական տարբեր օճախներու գործնապէս օժանդակելու ՀՕՄԻ աննահանջ

պատրաստակամութեան մասին:

Խորհրդակցութեան գլխաւոր նիւթերէն էր Ջաւախքի հայութեան վիճակուած Նորագոյն դժուարութիւններն ու անոր աջակցութեան ձեռք

երկարելու կարելիությունները, մանաւանդ որ ՀՕՄԻ Կեդրոնական Վարչութիւնը այս իմաստով կոչ մը ուղղած է վիրահայոց օժանդակութեան: Առաջնորդ Սրբազանը հաստատեց, թէ Ազգ. Առաջնորդարանն ու անոր հովանիին տակ գործող բոլոր միաւորները՝ եկեղեցի թէ դպրոց, միշտ պատրաստ եղած են գործնապէս ընդառաջելու Հայաստանի ու հայկական որեւէ օճախի օժանդակութեան նախաձեռնութիւններուն, միաժամանակ վեր առնելով համակարգուած աշխատանք տանելու անհրաժեշտութիւնը:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը յաջողութիւն մաղթեց ՀՕՄԻ վարչականներուն ու պատասխանատուներուն եւ անոնց նուիրեց ժազ Ս. Յակոբեանի նորագոյն հատորէն՝ «Մեսրոպավէպ»էն օրինակներ:

## **PRELATE WELCOMES NEWLY ELECTED A.R.S. REGIONAL EXECUTIVE MEMBERS**

On the morning of Thursday, August 28<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy the newly elected members of the Armenian Relief Society Regional Executive. Representatives from ARS Social Service were among the delegation, which was headed by Chairlady Mrs. Vicky Marashlian.

The meeting began with Mrs. Marashlian introducing the new members and presenting the upcoming projects the organization has planned, which was followed by the Prelate acquainting the members with the various departments and undertakings of the Prelacy.

A central topic of discussion was the plight of Armenians in Javakh and the aid being offered to them through the Central Executive of the ARS. The Prelate affirmed the support and readiness of the Prelacy and affiliated bodies to offer any assistance necessary to Armenians worldwide, and stressed the importance of having coordinated efforts in this regards.

At the conclusion of the meeting the Prelate wished the members success in their endeavors and responsibilities, and presented them with copies of Jacques Hagopian's "Mesrobaveb" book.

## **«ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻՆ**

Երեքշաբթի, 26 Օգոստոսի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը «Նոր Զուղայի Բարեկամներ» յանձնախումբի ներկայացուցիչներուն, որոնք Ազգ. Առաջնորդարան եկած էին Առաջնորդ Սրբազանը շնորհաւորելու վերընտրութեան առիթով:

Հանդիպումը առիթ ծառայեց տեղեկութիւններ փոխանցելու եւ խորհրդակցելու յանձնախումբին աշխատանքներուն ու ծրագիրներուն մասին: Ծանօթ է որ այս յանձնախումբը Ազգ. Առաջնորդարանի հովանիին

տակ մարմին առած էր Նոր Ջուղայի չորրորդ դարադարձին առիթով, սակայն իր գործունեությունը կը շարունակէ ու անոր Նոր ծաւալ կու տայ ի իսկիւր մշակութային ժառանգութեանց պահպանման ու տարածման:

Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց շնորհաւորանքիս համար ու յաջողութիւն եւ յաւելեալ կենսաւորում մաղթեց յանձնախումբի գործունեութեան:

## **PRELATE MEETS WITH “FRIENDS OF NEW JULFA” COMMITTEE**

On the evening of Tuesday, August 26<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives from the “Friends of New Julfa” Committee.



The committee members had come to congratulate the Prelate on his re-election as well as to impart information about their endeavors and future projects which centers on upholding and promoting the traditions and heritage of New Julfa.

The Prelate commended the dedication and service of the committee members and wished them success in all their undertakings.